ըաց, բեռնակրաց, փէրէմէճոց եւ գինեծախից արքին (Ռեբէ)։

Եւ Մայիսի Թ մանղուլ արարին զՍօֆի Մէհէմմէտ փաշան, որ եկաց վէզիր Թ ամիս և Ե օր, և եդին վէզիր զՄուրատ աղան և զՍօֆին աքսորեցին ի Մալղարայ և անդ սպանին[1]. և զմիականի քէխիայ նորին խեղդամահ արարին ուժգնութեամբ Մուսլահատին և Պէքտաշ աղային և այլոցն, բայց մեծ և երևելիքն երեքեանս էին ի փառս արքայի։ Եւ եէնկիչէրի աղասի եղև Ղարայ Զաւուշն։

Եղբայր մօր ծնօղի մերոյ կոչեցեալն Մահտեսի Ամբակումն զոր ուխտեաց երթալ յԵրուսաղէմ և պատրաստէր կանխագոյն զպաշարս ճանապարհի, և յահէ ֆռանկին, որ ի Ծովն Սպիտակ՝ զբազում ամ ոչ երթայր ուխտաւորաց նաւ. պատրաստեաց ցամաքաւ երթալ ընդ սուրբերին Տաճկաց առ ճանապարհաւն Դամասկոսի։ Եւ յաղագս Հոգոյն Սրբոյ գտեալ եղեւ նաւ մի մեծ, որ ի կղզոյն էր Միս կոչեցելոյ, որ յԵզիպտոս բանէր, և կայր սայլ մի յԵրուսաղէմէ՝ այր ոմն Մարկոս, եղբայր Բուք Գրիգոր վարդապետի, որ ունէր ծանօթութիւն ընդ նաւապետին և խօսեցեալ ընդ նմա՝ միաբանեցան և ընդ մեզ յամենայն եկեղեցեաց, որք ունէին իղձ երթալ ի սուրբ Երուսաղէմ։ Եւ իբրեւ տեսին զի էր նաւ, եւ բազմացան ընկերք մինչև Ղ–ից, այր և ընդ կին, և ընդ մեր գլխաւորք Քէպէճի Զիրաքն և Քէրէստէճի Մուրատն, Խոտավէրտի Ղալֆան և Էքմէքճի Կիրակոսն Շէհրի Տէր Գրիգորին և միւս Կիրակոսն, Էքմէքճի Փէրէմէճին և այլք. Տէր Բարղամն Տիվրիկցի և Տէր Ղազարն Խասգեղցի և մեք ընդ Մղտեսի Մարկոսիւն, և ոչ կարա–

1) սպան.